

... ԾԱՌՁԱՐԳՈՐ ԵՒ ԻՒՐ ԵՂ,
 ԲԱՅՐՆ ԳՐԻԳՈՐ ՄԻԱՅՆԱԿ
 ԱՅ ՈՐ Է ՄԱՔՐՈՂ ԵՒ ԼՈՒՍԱ
 ... ԲԱՐ ԳԼԽԱՏՄԱՆ ՍԲ Ա
 ... ՔԵԼՈՅՆ ՊՕՂՈՍԻ ԿԱՆ
 ԿՆԵՑ ՁՄԲ ԽԱՉՍ ԲԱՐԵ-
 ... ԱԻՍ Ի ԻՒՐԵԱՆՑ ԵՒ ԱԼ ԵՂԲ
 ... ԲՅՆ ՈՐՔ ՀԱՆԳԻՊԻՔ ՍԲ ՈՒ
 ԽՏԻՍ ՎԵՐՈՅԳՐԵԼՈՅՍ
 ԹՈՂՈՒԹԻՒՆ ԽՆԳՐԵՑՆԷՔ Ի Ք...
 ԵՒ ՁԵՂԿԵԼԻ ԿԱՉՄՈՂ Խ...
 ... ՁԻՍ ՁՓՈՍՆԿ ԳՐԱԿ...
 ԾՆՈՂԱԽԲ ԻՄ՝ ԵՒ ՔՍ ՁԵ
 Ձ ՈՂՈՐՄԵՍՑԻ ԱՄԷՆ

Թէ իսկապէս հայ վանքի վրայ է խօսքը՝ տարակոյս չկայ : Ուիտ , Լուսարար , և մանաւանդ ժողովրդական ձեռով Ծառադարձը = Ծաղկազարդ , և անկէ աւելի՝ Ս . Վարդանի անունը :

Կը մնան սակայն երկու անուն որոնք խնդիր կը յարուցանեն . նախ Կրամնիկ որ Կոստանդին ըլլալու է , ինչպէս Արմէլի-նի ալ կ'ուզէ : Յետոյ Փռակը հայազէտ որ կազմողն է խոյին : Պալճեան՝ ունիթո-րական վանք մը կ'ուզէ տեսնել հոն , որ միայն այդ Փռակիկն դժուար է հետեւցնել :

Յամենայն դէպս 649ին Հոռմի մէջ շատ ծանօթ հայ վանք մը՝ դեռ կ'ապրէր շուրջ 7 դար վերջ , 1305ին , որուն հետքերը կը կորսուին ասկէ վերջ մինչեւ 1417 :

Անցնելով Ս . Պետրոսի գերեզմանին քով եղած հայկական հաստատութեանց՝ հետեւեալ պատմական տեղեկութիւնները կը գտնենք :

ԺԳ դարու՝ եկեղեցիներու ցանկ մը կը նշանակէ թէ 1202ին Ս . Պետրոսի քով կար հայկական վանք մը և օթեւան մը՝ զոր Տէ Վաալ Հայոց առաջին schola = հոգետունը կը համարի , հիմնուած Իննով-կենտիս Գ Ս . Պապէն , և կը կոչուէր Ս . Գրիգոր Հայոց = Harmeniorum : Թո-րինոցի անանունը սակայն 1345ին զայն

կ'անուանէ «Oratorium S. Jacobi de Harmenis ... habebat ... duodecim fratres ... secundum ritum suum isti Armeni habent uxores et filios» , այսինքն «Մատու Ս . Յակոբայ Հայոց , որ ունէր տասներկու եղբայրներ (անդամ) ... այս հայերը իրենց ձէսին համեմատ կին և զաւակ ունին » (տէր-տէրները կ'ակնարկէ) : Արմէլի-նի համե-մատ այս վանքը գետեղուած էր Spirito Santo (Ս . Հոգի) բլրան կողքին : 1417-1431ին զրուած ցանկի մը մէջ ալ (Signorili) Ս . Մարիամ կը կոչուի «Beatae Mariae de Harmenis ultra pontem» , իսկ 1566-72ի ցանկի մը մէջ վերստին Ս . Յակոբ կը կոչուի (առանց հոգետան) :

Հոտ էր ուրեմն որ 1220ին բնակեցաւ Յովհաննէս է ուխտաւոր մեր հայ կաթո-ղիկոսը : Վերջերս անոր տեղը կը համա-րին Ս . Պետրոսի քովի կամարակապը՝ ուր էր երբեմն հին «Poenitentiaria» ն , որուն մէկ մասը «Հայոց կամարակապ» կը կոչէր ժողովուրդը : Ասկից կը համա-րին հնախօսները՝ 1246ին տապանագիրը , ինչ որ հաւանական չնկատեցինք : Հուսկ Մարթինելիի այդ եկեղեցին կը կոչէ S. Maria Virgariorum, San Gregorio Illuminatore :

Յիշեալներէն զատ 1563ին , Պիոս Գ Ս . Պապին կոնգրակի մը մէջ կը յիշուի եկեղեցի մը և կից հոգետուն մը զոր Ար-մէլի-նի «Ս . Նիկողոս ի բանտի»ն օժան-դակ կը համարի (filiale) և այդ եկեղե-ցոյ վաւերագրէ մը՝ 1578ին՝ կոչուած է «ecclesia parrochialis S. Laurentii prope pontem S. Maria in regione Ripa» , այսինքն Fabricio կամուրջին մօտ , ինչպէս կ'ըսէ Լանձի : Բայց սա երեք տարի վերջ կը քանդուի որովհետեւ հոն կը կազմուէր հրէից Ghetto ն . և հոն եղող հայերը կը փոխադրուին ի Ս . Մա-րիամ Եզրպտացի :